ՈՒՇԱԳՐԱՎ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ. ՓՐԿԻՉԸ ՀԱՅ ԿԵՐՊԱՐՎԵՍՏՈՒՄ[1]

Յիսուս Քրիստոսի կերպարը մարդկության պատմության հոլովույթում, անկասկած, ամենից շատ է արծարծված։ Պատմություն, գրականություն, փիլիսոփայություն, գեղարվեստ, կինո... Կա՞ գիտության ու արվեստի մի բնագավառ, որը չի անդրադարձել Նրան։

Բնական է, որ այդ ամենին անմասն չէր կարող մնալ աշխարհում առաջինը քրիստոնեությունը պետականորեն ընդունած հայ ժողովուրդը։ Որպես համաշխարհային կրոն՝ քրիստոնեությունը յուրաքանչյուր ժողովրդի մեջ որոշակի ազգային դրսեւորումներ է ունեցել, կրել տվյալ հանրության մշակութային, հոգեբանական, սովորութային եւ մի շարք այլ գործոնների կնիքը։ Աստված իր որդուն մարդու պատկերով ստեղծեց եւ ուղարկեց Երկիր։ Յուրաքանչյուր հավատավոր քրիստոնյա Նրա երկրային ու երկնային տեսակի առնվազն մի փոքրիկ նշույլն ունի իր մեջ։

Քրիստոսի կերպարը, դեռեւս վաղ միջնադարից սկսած, համայն մարդկության ուշադրության կենտրոնում է։ Այն հավատավորների հոգու մեջ է, արվեստագետների՝ նկարչի վրձնի, քանդակագործի բրիչի, գրողի գրչի եւ այլոց ստեղծագործ հայտնությունների ծիրում է։ Դժվար է հաշվել, թե քանի-քանի գլուխգործոցներ են ստեղծվել այդ կերպարի շուրջ. անշուշտ, այդ թիվը միլիոնների է հասնում։

Գիրքն սկսվում է նյութին առնչվող հետահայաց ակնարկով՝ համաշխարհային եւ հայ միջնադարյան ու նոր շրջանի արվեստում Քրիստոսի կերպարի կերտման հայտնի գործերի ներկայացմամբ։ Դա տրամաբանական կապ է ապահովում այդ ժամանակաշրջանների միջեւ։ Գունավոր արտատպումներն ուղեկցվում են տեսական դիպուկ ընդհանրացումներով, ինչի շնորհիվ առավել ընկալելի է դառնում տարածաժամանակային ներքին կապը։ Գիտության մեջ նյութի ընդհանրությամբ պայմանավոր-

---

[1] Սաթենիկ Վարդանյան, *Հիսուս Քրիստոսի կերպարը Ի. դարում եւ արդի հայ արվեստում, էդիթ պրինտ, Երեւան, 2020, 360 էջ + ներդիր։*

ված ուսումնասիրություն կատարելը նոր բացահայտումների հնարավորություն է ընձեռում, մատնանշում է տարբեր ժամանակաշրջաններում նույն խնդրին վերաբերող ստեղծագործությունների պատմական զարգացման ներքին միտումները, անհատի ու ժամանակի մտածողությունների դրսեւորումները։ Թվում է՝ թեմատիկ դաշտի ընտրությունը ինքնին թելադրում է միագիծ արծարծումներ, սակայն որքա՛ն բազմազան, բազմաժանր, բազմաբովանդակ ու անսպառ է Փրկչի կերպարի մեկնաբանության շրջագիծը։

Առաջին գլուխն ունի երկու ենթաբաժին։ Նախ ներկայացվում է համաշխարհային արվեստում Քրիստոսի կերպարի՝ առավել տիպական գլուխգործոցների համառոտ պատմությունը, իսկ երկրորդ բաժնում հայ իրականության մեջ մինչեւ ԺԹ. դարավերջն ընկած ժամանակահատվածում ստեղծված տարբեր ժանրերի գործերի համառոտ նկարագրությունն է։ Ընտրողաբար ներկայացված աշխատանքները բացահայտում են դարերի հոլովույթում այդ կերպարի զարգացման միտումները։ Հայ իրականության մեջ, բնականաբար, Քրիստոսի պատկերման արվեստը դրսեւորվել է առաջին հերթին խաչքարերի եւ մանրանկարչության ոլորտում, ինչպես նաեւ որմնանկարչության մեջ ու պատկերաքանդակներում։

Այստեղ ներկայացվում են Հիսուս Քրիստոսին պատկերելու ավանդույթները համաշխարհային կերպարվեստում։ Այս համառոտ ակնարկը նպատակ է հետապնդում՝ բացահայտելու ներքին կապը հայ եւ համաշխարհային կերպարվեստում Տիրոջը մարմնավորող գործերում, ի ցույց դնելու ընդհանրական կողմերն ու առանձնահատկությունները։ Չէ՞ որ հայ ժողովուրդը, լինելով քրիստոնեությունն ընդունած առաջին ազգերից մեկը, չէր կարող անմասն մնալ համաշխարհային գործընթացներից. ամեն մի ազգ, ամեն ժամանակ, նույնիսկ անհատ ստեղծագործող յուրովի են ընկալել այդ խորախորհուրդ կերպարի մարդեղեն ու աստվածային անսպառ գաղափարների հավիտենական խորհուրդը։

Քաջատեղյակությամբ ընտրված օրինակները գրքի այս բաժնում ներկայացնում են Դ. դարից մինչեւ Ի. դարասկիզբ հասնող համաշխարհային կերպարվեստի՝ Քրիստոսին նվիրված գլուխգործոցները՝ կերպարակերտման ժանրային բազմազանությամբ ու կատարողական հնարքներով՝ խճանկար, որմնանկար, պատկերաքանդակ, գեղանկար, սրբապատկեր եւ այլն։ Հեղինակն առանձնակի ուշադրության է արժանացրել Վերածննդի շրջանի վարպետների եւ ռուսական սրբապատկերների

դպրոցի ավանդույթները, քանի որ դրանք խորը հետք են թողել համաշխարհային եւ հայ հեղինակների ստեղծագործություններում Աստծու որդու կերպարը կերտելիս։ Գլուխն ավարտվում է հայ միջնադարյան եւ նոր շրջանի՝ Քրիստոսին պատկերող աշխատանքներին վերաբերող թռուցիկ, սակայն դիպուկ բնութագրումներով, հարուստ ակնարկով ու տիպական առատ նմուշների լուսանկարների տեսականիով։

Բուն թեման ամփոփված է երկրորդ եւ երրորդ գլուխներում։ Ժամանակաշրջանը, որ ընտրել է գրքի հեղինակը (Ի. դարից մինչեւ մեր օրեր), բաժանված է փուլերի՝ մինչեւ բոլշեւիկյան հեղափոխությունը, խորհրդային տարիներ (սա իր հերթին ունի շրջափուլեր), անկախության երեք տասնամյակ։

Ինչպես գիտենք, մինչեւ Առաջին հանրապետության հիմնադրումը հայ արվեստի բոլոր ոլորտները զարգացել են Հայաստանի տարածքից դուրս. հայկական մշակութային ու գիտության կենտրոններ էին ձեւավորվել աշխարհի տարբեր ծագերում, եւ դա, բնականաբար, իր ազդեցությունն է ունեցել հայ մտավորականների ընկալումների վրա։ Ի. դարի հայ կերպարվեստը նույնպես չէր կարող անմասն մնալ այդ դրսեւորումներից։ Դրա աշխարհագրությունը տարածվում էր Էջմիածնից մինչեւ Կ. Պոլիս, Ռուսական կայսրության հայաշատ բնակավայրերից (Թիֆլիս, Ղրիմ, Մոսկվա, Ս. Պետերբուրգ, Նոր Նախիջեւան) մինչեւ Երուսաղեմ, Իրան, Ֆրանսիա, ԱՄՆ եւ այլն։ Քաղաքական-մշակութային նման բազմազանության պայմաններում հայ մտավորականները որքան էլ կրում էին տեղի մշակույթի ազդեցությունը, այնուամենայնիվ ազգային ոգին անպայման գերակա էր նրանց ստեղծագործություններում։

Անդրադառնալով Ի. դարասկզբի հայ արվեստագետների կերտած Քրիստոսի կերպարին՝ Ս. Վարդանյանը երկրորդ գլխում նախ փոքրիկ ակնարկով ներկայացնում է ժամանակի մի շարք առավել աչքի ընկնող աշխատանքները՝ ցրված աշխարհի տարբեր քաղաքներում (Կահիրե, Լվով, Փարիզ, Նոր Նախիջեւան, Վլադիկավկազ եւ այլն)։

Այս գլխում հեղինակը ճիշտ մոտեցում է ցուցաբերել՝ առանձին բաժիններով ներկայացնելով հայ կերպարվեստի բացառիկ դեմքերի՝ Վարդգես Սուրենյանցի, Եղիշե Թադեւոսյանի, Գեւորգ Բաշինջաղյանի, Արշակ Ֆեթվաճյանի, Հակոբ Գյուրջյանի եւ Երվանդ Քոչարի կերտած Փրկչի կերպարներին։ Այս հեղինակների ավանդն անուրանալի է հայ գեղանկարչության ու քանդակագործության ասպարեզում ընդհանրապես եւ Քրիս-

տոսի կերպարի ամենաբազմազան ու ինքնատիպ մեկնություններում մասնավորապես։ Նրանք որքան էլ համաշխարհային ժամանակակից արվեստի ամենատարբեր ուղղությունների ու հոսանքների ներկայացուցիչներ էին, այնուամենայնիվ աստվածաշնչյան թեմաներով ստեղծագործություններում պահպանում էին ազգային ոգին ու ավանդույթները, որ սերում էին մանրանկարչության դպրոցի հարուստ ժառանգությունից։

Վ. Սուրենյանցի «Անձեռակերտ դաստառակը» անչափ տպավորիչ աշխատանք է, ուստի պատահական չէ, որ այն տեղ է գտել գրքի կազմի վրա։ Վրձնի ժլատ հարվածներով ստեղծված այս պատկերը Քրիստոսի էությունը բացահայտող հիրավի լավագույն օրինակ է։ Գրքի հեղինակը Սուրենյանցին իրավամբ համարում է հայ դասական գեղանկարչության առաջամարտիկ, որը նոր մոտեցումներով ստեղծեց Հիսուս Քրիստոսի բարոյահոգեբանական իրապաշտական կերպար՝ գեղանկարչություն բերելով նաեւ գեղարվեստական թարմ արտահայտչամիջոցներ, գույնի, հորինվածքի, ազգային խնդիրներ արծարծող կերպարաստեղծման նոր հնարքներ...

Մյուս հեղինակը, որն անդրադարձել է Քրիստոսի կերպարին, Ե. Թադեւոսյանն է։ Ինչպես Վ. Սուրենյանցը, Ե. Թադեւոսյանը նույնպես հայ կերպարվեստ մուծեց արեւմտաեւրոպական, հատկապես ռուսական գեղանկարչության նոր շունչն ու մտածողությունը, կատարողական արդի ձեւերն ու միտումները։ Հատկապես հիշատակելի են այդ թեմայով նրա խճանկարները, «Քրիստոսը եւ փարիսեցիները» եւ «Խաչելություն» կտավները։

Հայ գեղանկարչության դասականներից մյուսը, որի՝ Փրկչի կերպարի առանձնահատկություններին անդրադարձել է Ս. Վարդանյանը, Գեւորգ Բաշինջաղյանն է։ Առավելապես որպես բնանկարիչ հայտնի Բաշինջաղյանի գործերում քիչ են կրոնական թեմաներով, հատկապես Քրիստոսին նվիրված աշխատանքները։ Գրքի հեղինակը դա բացատրում է նկարչի խառնվածքով ու հետաքրքրությունների շրջանակով։ Այնուամենայնիվ հիշարժան ու մնայուն գործեր են «Գեթսեմանիի այգի», «Գեթսեմանիի այգում» գեղանկարները եւ նույն թեմայով արված որմնանկարները։

Հաջորդ մեծանուն նկարիչը, որ ներկայացված է այս գլխում առանձին ենթավերնագրի տակ, Արշակ Ֆեթվաճյանն է, արվեստագետ, որը երկար դեգերումներից հետո հանգրվանել է ԱՄՆ-ում։ Բազմահմուտ եւ բազմաժանր այս նկարիչն իր աշխատանքների մեծ մասը նվիրա-

բերել է Հայաստանի ազգային պատկերասրահին։ Նրա «Քրիստոսները» առանձնանում են խոհականությամբ, ինքնամփոփությամբ, փիլիսոփայական ընդհանրացումներով։

Երկրորդ գլուխը, որը, ինչպես նշվեց, գրքի հիմնական ատաղձն է, պայմանականորեն կարելի է բաժանել երկու մասի՝ ա) գեղանկարիչներ (որոնց մասին արդեն խոսել ենք) եւ բ) քանդակագործներ։ Դա ոչ միայն ժանրային բաժանում է, այլեւ գաղափարական՝ որպես դպրոցների եւ ոճական-ստեղծագործական բոլորովին այլ մտածողությունների վկայություն։

Գյուրջյանն առաջինն է հայ իրականության մեջ, որ քանդակել է Ամենափրկչին. գրքի հեղինակը դա բացատրում է այն բանով, որ Հայ Եկեղեցին, ի տարբերություն կաթոլիկների, մերժում էր Քրիստոսի քարակերտ կերպավորումը։ Փարիզյան զանազան «իզմերի» միջավայրում քանդակագործն աչքի է ընկել յուրօրինակությամբ՝ սեփական եսի որոնումներում հավատարիմ մնալով իր ազգային ինքնությանը, դավանանքին։ Նրա «Քրիստոսի գլուխը», այդ թեմայով ճեպանկարների ու էսքիզների հարուստ հավաքածուն եւ քանդակների շարքը՝ «Ողբ» վերտառությամբ, մնայուն արժեքներ են, որ մի նոր աստիճանի հասցրին հայ կերպարվեստում նոր-նոր սկզբնավորվող կոթողային արվեստը։

Երվանդ Քոչարի ինքնատիպ անհատականությունը, եւ դասական, եւ արդիապաշտ (մոդեռնիստական) գեղարվեստական սկզբունքները վարպետորեն համադրելու կարողությունը, արտացոլված ենք տեսնում նաեւ նրա՝ Քրիստոսին մարմնավորող ստեղծագործություններում։ Երկու աշխատանքները («Տեսիլք. Քրիստոսն ու Մարիամ Մագդաղենացին» եւ «Հարություն») դասական պատկերացումներից անչափ հեռու են. երիտասարդ Քոչարը տուրք է տվել փարիզյան արդիապաշտ արտահայտչաձեւերին։ «Քրիստոսի կերպարը ենթարկվեց հոգեվերլուծական եւ գեղանկարչական նոր միջոցների ու ձեւերի կիրառման փորձության, ինչն արտացոլվեց Երվանդ Քոչարի արվեստում»,— եզրակացնում է գրքի հեղինակը։

Վերջին գլուխը հավելված-ալբոմ է, որտեղ ներկայացված են 1960-ականներից մինչեւ մեր օրերը Քրիստոսի կերպարը կերտած նկարիչների ու քանդակագործների աշխատանքների լուսանկարները։ Ժամանակագրական առումով «բացատ» է առաջացել. երկրորդ գլուխն ավարտվում է Ի. դարի 20-ական թվականներով, իսկ երրորդ գլուխն

սկսվում է 1960-ական թվականներից։ Երեք տասնամյակի այս «խզման» պատճառը հայտնի է. դրանք ստալինյան անաստվածության, բոլշեւիզմի աստվածամերժական քաղաքականության տարիներն էին, որից անմասն չի մնացել նաեւ կերպարվեստը։

«Զնհալի» շնորհիվ ազատության շունչ ստացած ստեղծագործությունների հրաշալի բույլեր ենք տեսնում, որոնք բոլորովին նոր որակ են հաղորդում հայ կերպարվեստին ու քանդակագործությանը՝ մտածողության, գույների, ասելիքի նոր շունչ ներմուծելով այդ միջավայր։ Երկաթյա վարագույրի՝ ճեղք տված օդանցքներից Հայաստան էին թափանցում նաեւ համաշխարհային կերպարվեստի բազմազան ուղղություններ, սերտանում էին շփումներն օտար ափերում ստեղծագործող մեր հայրենակիցների հետ։

Աշխատանքը շահեկանորեն առանձնանում է նաեւ այն առումով, որ հեղինակը գտել ու շրջանառության մեջ է դրել հայ աշխարհի տարբեր պահոցներում գտնվող ստեղծագործողների քիչ հայտնի աշխատանքներ։

Այս գիրքը հասցեագրված է բոլոր այն հայերին, որոնց հետաքրքրում են իրենց ինքնության ակունքները նաեւ հավատքի տեսանկյունից։ Միգուցե անհամոզիչ թվա, բայց մեր կարծիքով՝ աշխատանքը հասանելի է անգամ հայերեն չիմացողին, քանզի հայ եւ համաշխարհային գլուխգործոցների լուսանկարների առատությունը եւ գիտական դասակարգումը լիովին հաղթահարում են լեզվական անջրպետը։ Քաջատեղյակ արվեստաբանը կարողացել է համակարգված ներկայացնել թեմատիկ ընդհանրությամբ փոխկապակցված ստեղծագործությունների ամբողջ շղթան։

ԼԵՒՈՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ